



Ուրեմն ռատիոնի ալֆա ճառագայթները, երբ զարնուին պէրիլիում մետաղին, զայն կ'այլափոխեն ածխածինի եւ նէոթրոն մը առաջ կը բերեն: Այս հիւլէական հակազդեցութիւնը հետեւեալ ձեւով կը ներկայացուի.



Նախապէս ըսինք որ շատ անգամ նէոթրոններու ուժը բաւական չէ՝ տեղի տալու համար հիւլէական հակազդեցութեան, ասոր համար պէտք է զանոնք աւելի ուժեղացնել, այսինքն շրջապատել ջուրով կամ փարաֆինով, որ շատ ջրածինի հիւլէներ կը պարունակեն. ասով նէոթրոնները կ'երթան կը զարնուին ջրածինի հիւլէներուն, ջերմութիւն առաջ կը բերեն եւ կը դանդաղին: Այս դանդաղ եւ ջերմակիր նէոթրոնները՝ ինչպէս դտած է Հենրիքոյ Ֆէրմի, շատ աւելի ազդեցիկ են: Ուրեմն կարող է պատահիլ, որ հիւլէական ռումբին մէջ, այսինքն ռադիոնիումի դոնտին մէջ փոս մը բացած ըլլան եւ հոն դրած բարակ շիշ մը, որ պէտք է պարունակէ փոշիացած պերիլիում եւ հատիկ մը ռատիոն: Յարմար ժամանակին եթէ շիշին բոլորտիքը ջուրով լեցնենք՝ կը ստանանք 30-40 անգամ աւելի ազդեցիկ նէոթրոններ, որ բաւական են ծայր տալու ռադիոնիումի պայթումին: Թերթերը ժամանակին գրեցին թէ Հիրոշիմի վրայ ձգուած ռումբը պայթած է 600 մեգը բարձրութեան վրայ: Ուրեմն արդեւքի մը զարնուելով չէ որ պայթած է, այդ կը հաստատէ վերը տրուած բացատրութիւնը:

Կարելի է նաեւ ուրիշ ձեւով պայթեցնել ռադիոնիումը. փոսին մէջ լեցնելով ծանր ջուր եւ սաւառնակէն արձակելով կամմա ճառագայթներ: Այն ատեն ծանր ջուրը կը ծծէ այդ ճառագայթները եւ կ'այլափոխուի սովորական ջուրի, միեւնոյն ժամանակ արձակելով նէոթրոն ճառագայթներ, ո-

րոնք նոյն ջուրին մէջ կը դանդաղին եւ աւելի ատակ կը դառնան ռադիոնիումը պայթեցնելու: Մէկ կամ միւս ձեւով երբ ռադիոնիումը պայթի՝ հետեւեալ հիւլէական ներգործութիւնը տեղի կ'ունենայ.




ՆՈՐ ԱՇԽԱՐՀ

Հիւլէի անջատման հետեւանքները յայտնի եղան ճարտնի վրայ ձգուած երկու ռումբերով: Եթէ կարելի ըլլար տիրապետել եւ շահագործել այդ ուժը խաղաղ նպատակներու համար՝ չտեսնուած յեղաշրջումներ առաջ պիտի դային: Ատիկա արդէն նախատեսուած էր 1906ին, երբ Կիւսթաւ լը Պոն կը գրէր. «Անջատել դիւրութեամբ նիւթը՝ կը նշանակէ մարդկութեան տալ տաքութեան անվերջ աղբիւր մը եւ քարիւղի ու ածուխի հանքերու տաժանակիր աշխատանքէն ազատիլ: Այն դիտնականը՝ որ հնարէ միջոց մը դիւրութեամբ շահագործելու նիւթին մէջ պարունակուած ուժը՝ իսկոյն կը փոխէ աշխարհիս երեսը: Անսահման զօրութեան աղբիւր մը ձգիօրէն մարդուն տրամադրութեան տակ դրուելով՝ նա պէտք պիտի չունենայ այլեւս չարաչար աշխատելու: Այն ատեն աղքատը հարուստին հաւասար պիտի ըլլայ եւ ոչ մի ընկերային խտրութիւն գոյութիւն պիտի ունենայ»:

Քառասուն տարի վերջ այս մարդարէութիւնը դրեթէ իրականացած է, որովհետեւ բոլոր հիւլէներու անջատումը կարելիութեանց սահմանին մէջ կը մտնէ, սակայն մինչեւ օրս միայն մէկ անջատում գործնական արժէք ունեցած է եւ դժբախտաբար ան ալ մարդկութեան ցաւերը աւելցնելու համար: Յուսանք որ քաղաքական արկածախնդրութիւնները չկարենան այլեւս շահագործել դիտնականներուն աշխատանքը՝ քանդելու համար մարդոց դարերէ

ի վեր հաւաքած բարոյական եւ նիւթական խառած են առանց ազդային սահման արժէքները: Ի հարկէ օր մը պիտի իրականանայ անկեղծ երազը այն ճշմարիտ դիտնականներուն, որ հոգիով ու սրտով աչ-



ԼՔՈՒԱԾ ԲՈՒՐՎԱՌԸ

Աւանդատան մութ անկեան մէջը լքուած Գուրջս շարժեց վաղընջական այս բուրվառ. Դեռ կը ծորէր աղօթքի բոյր մեղմաբար, Դեռ խոնկերու նրբին քօղով պարուրուած:

Ու կը սպասէր զանգակներուն տօնական իրաւունքներու հրեշտակներուն իր բոցով. Ինքը դիտէր յուզել սրտերն աղօթքով եւ պատրաստել պատարագի սուրբ Սեղան:

Ո՛րքան անոյշ կը հնչէին բոժոժներն Սօսափին հետ հրեշտակներու թեւերուն. Սիրտ մը կ'ըլլար նրման կարմիր վարդերուն Սուրբ սուրբն երբոր երեք անգամ կը հնչէր:

Ի՞նչպէս հիմա համակամիլ այս մութին Ծեր մըջակին պէս որ հողէն չի զատուիր, Խոնկի թեւեր կ'ուզէ աղօթքն հողելիր. Ու կը թողնեն զայն մութին մէջ տակաւին:

Ի՞նչպէս այստեղ մընայ անհուն կարօտով ժամագրքին, լուսապըսակ սուրբերուն. Ի՞նչպէս մարդիկ յոյս տան իրենց օրերուն երբ չեն տաքնար սաղմոսներն իր սրտին քով:

Եւ այսպէս միշտ մութ անկեան մէջ առանձին Ամէն առտու կը կարմրի ինքն իրեն. Հրեշտակ մ'անշուշտ պիտի իջնէ երկնքէն Ձայն խառնելու բուրվառներուն երկնային: